Քաղվածք

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆ

ՀՐԱՄԱՆ № 29Ն

«15» փետրվարի 2017թ. ք. Իջևան

§ 1

ՈՒսանողների գիտելիքների գնահատման կարգում փոփոխություն կատարելու նպատակով հանձնաժողով կազմելու մասին

Կարևորելով ԵՊՀ Իջևանի մասնաճուղում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործող համակարգի դերն ու նշանակությունը, գիտելիքների գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից որպես հետադարձ կապ օգտագործելու անհրաժեշտությունը, մասնաճյուղում դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման ու կատարողականի բարձրացման, գիտելիքների արդյունավետ գնահատման հնարավորությունն և արժանահավատությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև հիմք ընդունելով մասնաճյուղի գիտական խորհրդի 11.02.2017թ. № 22 նիստի որոշումը և մասնաճյուղի կանոնադրության 21-րդ հոդվածի 14-րդ և 28-րդ հոդվածի 18-րդ կետերի պահանջները՝

հրամայում եմ.

1. ԵՊՀ Իջևանի մասանաճյուղում կազմել ուսանողների գիտելիքների գնահատման կարգը փոփոխող հանձնաժողով հետևյալ կազմով.

1.1. ***հանձնաժողովի նախագահ*** - **Վաչիկ Արամայիսի Բրուտյան,** մասնաճյուղի տնօրենի խորհրդական՝ կրթական ծրագրերի գծով,

1.2. ***հանձնաժողովի անդամներ*** - **Արկադի Ցոլակի Դավթյան,** ուսումնամեթոդական վարչության պետ,

1.3. - **Նելլի Բաբկենի Խուդավերդյան,** տնտեսագիտության ֆակուլտետի դեկան,

1.4. - **Ալեքսան Շամիլի Մարգարյան,** կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան,

1.5. - **Մարիետա Ալբերտի Ճաղարյան,** մասնաճյուղի կրթության որակի ապահովման բաժնի վարիչի ԺՊ,

1.6. - **Մուշեղ Լևոնի Սարուխանյան,** հեռակա ուսուցման բաժնի վարիչի տեղակալ:

2. Հանձնարարել հանձնաժողովի նախագահ Վ.Բրուտյանին՝ սեղմ ժամկետում ուսումնասիրել ուսանողների գիտելիքների գնահատման ժամանակակից չափորոշիչները և մասնաճյուղի

09.09.2011թ. համապատասխան կարգում կատարել փոփոխություններ և լրացումներ: Նշված գործընթացի ժամանակ խորհրդակցել պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության հետ, և առանձին դեպքերում հիմք ընդունել նրանց կողմից ներկայացված հիմնավոր առաջարկությունները:

3. Հրամանը ծանոթացնել մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմին և ուսանողությանը:

ՏՆՕՐԵՆ՝ Ս.Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ